ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«29» հունվարի 2014թ. N 28

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ «ԱՐՄԱՎԻՐ - ԱՐԵՎԻԿ» ԵՎ «ԱՐՄԱՎԻՐ-ՓՇԱՏԱՎԱՆ» ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշմամբ, հիմք ընդունելով «Էջմիածնի ԲՈՒԱՏ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենի 2014 թվականի հունվարի 24-ի գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Դադարեցնել « Էջմիածնի ԲՈՒԱՏ» բաց բաժնետիրական ընկերության «Արմավիր-Արևիկ» և « Արմավիր – Փշատավան» ավտոբուսային երթուղիների սպասարկման իրավունքը:
2. «Արմավիր- Արևիկ» և «Արմավիր – Փշատավան» ավտոբուսային երթուղիների սպասարկումը ժամանակավորապես թույլատրել իրականացնել «Էջմիածնի ԲՈՒԱՏ» բաց բաժնետիրական ընկերությանը՝ մինչև սահմանված կարգով նոր մրցույթի կայացումը:
3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում կազմակերպել ներմարզային «Արմավիր-Արևիկ» և «Արմավիր-Փշատավան» ավտոբուսային երթուղիների մրցույթ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ